Հայ-Ռուսական Համալսարան

ՄԱԼԽԱՍՅԱՆ ԼԻԱՆԱ ՄԱԼԽԱՍԻ

Իրավունքի սկզբունքների դերը ՀՀ իրավական համակարգում.
պրակտիկ և տեսական վերլուծություն

ԺԲ.00.01 «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման ատենախոսություն

Սեղմագիր

Երևան – 2018

Российско-армянский университет

Малхасян Лиана Малхасовна

Роль принципов права в правовой системе РА:
практический и теоретический анализ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.01 - «Теория и история государства и права; история государственных и правовых учений»

Ереван-2018

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Հ.Մ. Ստեփանյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ռ.Գ. Պետրոսյան**
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Գ.Մ.Գրիգորյան**

Առաջատար կազմակերպություն ՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիր (ակադեմիա)

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018թ. մայիսի 5-ին ժամը 11:00-ին, Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմին 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գիտական աշխատողների գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2018թ. ապրիլի 5-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
Իրավաբանական գիտությունների թեկնածու **Ջ.Հ. Հայրապետյան**

Тема диссертации утверждена в Институте философии, социологии и права НАН РА

Научный руководитель: доктор юридических наук, профессор **О.М. Степанян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **Р.Г. Петросян**
кандидат юридических наук, доцент **Г.М. Григорян**

Ведущая организация: Академия образовательного комклекса Полиции РА

Защита состоится в 5 мая 2018 г., в 11:00, на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (г. Ереван, 0051, Овсепа Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки РАУ

Автореферат разослан 5 апреля 2018 г.

Ученый секретарь специализированного совета
кандидат юридических наук **Дж. А. Айрпетян**

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Հետազոտության թեմայի արդիականությունը: Թեմայի հետազոտության արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ իրավունքի սկզբունքների հիմնախնդիրը ոչ միայն տեսության, այլ նաև իրավաբանական պրակտիկայում դարձել է առավել քննարկվող և օրախնդիր հարցերից մեկը:

Այս առումով քննարկվող թեմայի արդիականությունը կարևորվում է իրականացված սահմանադրական փոփոխությունների համատեքստում, երբ մոտ երկու տասնյակ սկզբունքներ իրենց ամրագրումը ստացան ՀՀ փոփոխված Սահմանադրության հոդվածներում (տե՛ս, մասնավորապես՝ 3, 4, 5, 6, 7, 26, 28, 30, 39, 50, 66, 68, 71, 72, 73, 78, 79 և այլ հոդվածները): Նշված սահմանադրական սկզբունքները ըստ իմաստի և բովանդակության լինելով համապարփակ ու ընդհանուր իրավական սկզբունքներ, պետք է առավել կոնկրետացվեն գործող ճյուղային (նյութական և դատավարական) օրենսդրության մեջ, որպեսզի ապահովվեն դրանց կիրառման կառուցակարգերը (մեխանիզմները) պրակտիկայում:

Իրավունքի սկզբունքների ներուժը նաև նրանում է կայանում, որ դրանց գործադրմամբ ապահովվում է օրենսդրության միատեսակ կիրառումը պրակտիկայում, հարթեցնում է իրավական հակասությունները և անորոշությունները, ինչպես նաև լրացնում կամ վերացնում է իրավական բացերը՝ իրավակարգավորումների ոլորտում:

Իրավունքի սկզբունքների հետազոտության արդիականության կարևորությունը պայմանավորված է նաև նրանով, որ չնայած այն հանգամանքին, որ պետության և իրավունքի տեսության մեջ գոյություն ունեն իրավունքի սկզբունքների վերաբերյալ բազմաթիվ մոտեցումներ և բնութագրական ձևակերպումներ, այնուամենայնիվ պետք չէ շրջանցել այն հանգամանքը, որ իրավունքի սկզբունքների բովանդակային ողջ էությունը բավարար չափով չի արտացոլվում և պարզաբանվում նորմատիվ իրավական ակտերում:

Իրավունքի սկզբունքների հետազոտությունը արդիական է նաև, քանի որ ատենախոսության շրջանակներում առաջ քաշված և վեր հանված հարցադրումները հասարակության կողմից ընկալվում են, որպես իրավահարաբերությունների օբյեկտիվ

և արդյունավետ կազմակերպման նորմատիվ կարգավորիչներ, ուստի իրավահարաբերություններում իրավունքի սկզբունքների ոչ լիարժեք կամ թերի գործելու հանգամանքը կարող է հանգեցնել ողջ իրավական համակարգի խաթարման:

Բացի վերոթվարկված պայմաններից, ատենախոսության թեմայի արդիականությունը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ իրավակարգավորման արդյունավետությունը լիարժեք կերպով իրականացնելու և դրա բնականոն զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է ոչ միայն իրավունքի սկզբունքների հստակ և ճշգրիտ ամրագրում նորմատիվ իրավական ակտերում, այլ նաև անհրաժեշտ հսկողության մեխանիզմների կիրառում, իրավունքի սկզբունքների անշեղ և օպտիմալ կիրառման ընթացքում, քանի որ իրավունքի սկզբունքների պահպանման և հստակ կիրառման դեպքում միայն կարող է պետությունը համարվել իրավական, քանզի իրավունքի սկզբունքները հանդիսանում են ցանակացած իրավական համակարգի հիմանասյունը:

Վերոթվարկված հիմնախնդիրներով է պայմանավորված ատենախոսության թեմայի հետազոտության արդիականությունը:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Հայրենական և արտասահմանյան իրավաբանական գրականության մեջ իրավունքի սկզբունքների բնորոշումների, առավել ևս դրանց բովանդակության, դասակարգման, ամրագրման, կիրառման վերաբերյալ մոտեցումները բազմաթիվ են, սակայն մեկ միասնական մոտեցում իրավունքի սկզբունքների հիմնախնդիրների վերաբերյալ դեռևս ձևավորված չէ, չնայած այն հանգամանքին, որ պետության և իրավունքի տեսության մեջ իրավունքի սկզբունքներին վերաբերվող հիմնահարցերը հանդիսանում են բավականին խորը ուսումասիրության ենթարկված իրավական երևույթներից: Հայ իրավագետների՝ Վ.Ս. Ներսեսյանցի, Գ.Հ. Սաֆարյանի, Գ.Գ. Հարությունյանի, Ն.Ա. Այվազյանի, Ն.Ա. Ապիյանի, Ա.Գ. Վաղարշյանի կողմից իրավունքի սկզբունքների հիմնախնդիրները որոշակի չափով ուսումնասիրվել են, սակայն իրավունքի սկզբունքների ձևակերպման, բովանդակային պարզաբանումների, դասակարգման և ատենախոսության թեմայի շրջանակներում առաջ քաշված մի շարք այլ հիմնախնդիրներ, այնուամենայնիվ կարիք ունեն ամբողջական և համակողմանի վերլուծության: Ի տարբերություն հայ իրավական մտքի՝ արտասահմանյան

իրավաբանական գրականությունը բավականին հարուստ է իրավունքի սկզբունքների հիմնահարցերի վերաբերյալ կատարված վերլուծությունների մասով: Վ.Ն. Կարտաշովի, Ե.Ս. Ֆրոլովի, Ե.Վ. Սկուրկոյի, Վ.Ն. Կուդրյավցևի, Ն.Ն. Վոպլենկոյի, Լ.Ս. Յավիչի, Ժան Լուի Բերժելի, Իմրե Սաբոյի և այլ նշանավոր իրավագետների կողմից կատարված իրավագիտական վերլուծությունները բավականին մեծ ազդեցություն են ունեցել իրավունքի սկզբունքների հիմնահարցերի լուծման գործընթացներում:

Հետազոտության առարկա հանդիսացող հարցապնդումների վերաբերյալ պարզաբանումներ տրվել են նաև Եվրոպայի խորհրդի[1], Վենետիկի հանձնաժողովի[2] և Միավորված Ազգերի Կազմակերպության[3] զեկույցներում և բանաձևերում:

Չնայած այն հանգամանքին, որ իրավունքի սկզբունքների վերաբերյալ թե՛ տեսական, թե՛ գործնական վերլուծությունները բազմաթիվ են և ատենախոսության հետազոտության ընթացքում հիմք են ծառայել վերոթվարկված տեսական և գործնական մշակումների համար, այնուամենայնիվ, պետք է նշել այն հանգամանքը, որ ատենախոսության թեմայի շրջանակներում առաջ քաշված հիմնահարցերի հետազոտությամբ իրավունքի սկզբունքներին վերաբերվող հիմնախնդիրները չեն սպառվում և կարիք ունեն հետագա ուսումնասիրության:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է լիարժեք և բազմակողմանի կերպով վերլուծության ենթարկել իրավունքի սկզբունքների բովանդակային էությունը, վեր հանել իրավունքի սկզբունքների հասկացության և ձևակերպումների վերաբերյալ առկա հիմնախնդիրները, ուսումնասիրել դրանց նշանակությունը և դերը իրավունքի արդի զարգացումների շրջանակում, բացահայտել իրավունքի սկզբունքների որոշիչ ազդեցությունը իրավակարգավորումների և իրավական համակարգի վրա:

Այդ նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

[1] Տե՛ս The Council of Europe and the Rule of Law - An Overview CM(2008)170 21 նոյեմբերի 2008թ.:
[2] Տե՛ս առավել մանրամասն Վենետիկի հանձնաժողովի 2011թ. ապրիլի 4-ի CDL-AD(2011)003rev. զեկույցում էջ 3-5 http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2011)003rev-e:
[3] Տե՛ս առավել մանրամասն ՄԱԿ-ի՝ 2012թ. սեպտեմբերի 24-ին ընդունած «Իրավունքի գերակայության մասին» բանաձևի դրույթներում https://www.un.org/ruleoflaw/high-level-meeting-on-the-rule-of-law-2012/:

- բացահայտել իրավունքի սկզբունքների բովանդակային էությունը իրավական համակարգում,
- մշակել «իրավունքի սկզբունք» եզրույթի առավել համալիր և ընդգրկուն ձևակերպումը,
- վեր հանել և համակարգել իրավունքի սկզբունքների կարևորագույն գործառույթները և հատկանիշները,
- գիտականորեն հիմնավորել և դասակարգել իրավունքի սկզբունքների տեսակները,
- ներկայացնել ընդհանուր իրավական սկզբունքների առաքելությունը ազգային իրավական համակարգում,
- վերլուծել իրավունքի սկզբունքների ամրագրման հետ կապված հիմնախնդիրները իրավաստեղծ գործընթացներում,
- բացահայտել իրավունքի սկզբունքների կիրառման ընթացքում ի հայտ եկած թերությունները և բացերը, ինչպես նաև առաջարկություններ ներկայացնել դրանք շտկելու վերաբերյալ,
- ներկայացնել դատական պրակտիկայում կիրառվող իրավունքի սկզբունքների հետ կապված հիմնախնդիրները և առաջարկել դրանց համարժեք լուծումները:

Գիտական նորույթը: Գիտական նորույթը կայանում է նրանում, որ համակարգված և հանգամանալից կերպով ուսումնասիրության է ենթարկվել իրավունքի սկզբունքներին վերաբերվող տեսական և գործնական հիմնախնդիրները: Ատենախոսության շրջանակներում ուսումնասիրվել են իրավունքի սկզբունքների հիմնախնդիրներին նվիրված հայրենական և միջազգային գիտական, գործնական մշակումները, որոնց համադրման և համեմատական վերլուծությունների արդյունքում մշակվել և ներկայացվել է գիտականորեն հիմնավորված առաջարկություններ և եզրահանգումներ, որոնք զգալիորեն կնպաստեն իրավակարգավորումների արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև առկա խնդրահարույց տեսական և գործնական խնդիրների լուծմանը: Ատենախոսության գիտական նորույթը նաև նրանում է, որ աշխատանքում բացահայտվել են իրավաստեղծ, իրավակիրառ և դատական պրակտիկայում առկա իրավունքի սկզբունքների հիմնխնդիրները, ինչպես

նաև փորձ է արվել տեսական և գործնական օրենսդրական աառաջարկությունների տեսքով ներկայացնել դրանց իրավական լուծումները:

Սույն ատենախոսության մեջ թե՛ տեսական, թե՛ գործնական առումով գիտական նորույթ են պարունակում նաև պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթները.

1. Իրավունքի սկզբունք ասելով հասկանում ենք ունիվերսալ, իրական, բազային, նորմատիվ-իրավական ամրագրում ենթադրող հիմնադրույթ, որը կանխորոշում է իրավական կարգավորման հիմնականան ուղղությունները, միաժամանակ ապահովելով իրավաբանական պրակտիկայում՝ իրավաստեղծ և իրավակիրառ մարմինների գործունեության բարձր որակը, արդյունավետությունը, որոշակիությունը և կանխատեսելիությունը:

2. Իրավունքի սկզբունքի կառուցվածքը բնորոշվում է որպես այնպիսի կազմավորում, էլեմենտների համադրություն, որը ապահովում է իրավունքի սկզբունքների ամբողջականությունը և հատկանիշային առանձնահատկությունները՝ սուբյեկտիվ և օբյեկտիվ բազմաթիվ ազդեցություններից: Իրավունքի սկզբունքները կազմելով մեկ միասնական համակարգ՝ իրենց մեջ պարունակում են, մասնավորապես գենետիկական, գործառույթային, ժամանակային, տարածական, տրամաբանական, տեսական-գիտական, հորիզոնական, ուղղահայաց ենթակառուցվածքներ, որոնք էլ ապահովում են իրավունքի սկզբունքների լիարժեք և գործուն լինելու հանգամանքը՝ իրավահարաբերության ցանկացած փուլում:

3. Իրավունքի սկզբունքների, իրավական նորմերի և իրավական կանոնների համեմատական վերլուծության արդյունքում ձևավորվել են իրավունքի սկզբունքներին առավել բնորոշ նոր հատկանիշներ, որոնք համահունչ են հասարակական-իրավական արդի զարգացումներին.

3.1 Իրավունքի սկզբունքները հանդիսանում են քաղաքացիաիրավական և հասարակական բնականոն զարգացումների օբյեկտիվ արդյունք, քանի որ ժամանակակից աշխարհում քաղաքացիարավական հասարակությունը բնութագրվում է որպես բարձր իրավագիտակցություն ունեցող անհատների միավորում: Իսկ յուրաքանչյուր քաղաքացիաիրավական հասարակության հենքն են կազմում իրավական սկզբունքները, որոնք առավել հղկվում և մշակվում են հենց հասարակության միջուկը կազմող բարձր իրավագիտակցություն ունեցող անհատների

կողմից առաջ քաշված օբյեկտիվ, բայց ոչ երբեք սուբյեկտիվ մոտեցումների և գաղափարների ճնշման ներքո:

3.2 Իրավունքի սկզբունքներին ներհակ և առավելապես նոր բնութագրական հատկանիշ է համարվում համապարտադիրությունը և իմպերատիվ բնույթը: Արդի իրավակարգավորումների շրջանակներում պետությունը, հռչակվելով իրավական, պարտավորվում է պետական արտաքին և ներքին գործառույթների օգնությամբ և միջոցով ապահովել ցանկացած քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների համակարգի անխաթար և անշեղ գործարկումը: Իսկ մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները կարող են լիարժեքորեն իրացվել միայն այն իրավական պետությունում, որտեղ իրավունքի սկզբունքները ունեն պետության կողմից հստակ պահպանվելու գործուն երաշխիքներ:

3.3 Իրավունքի սկզբունքներին հատուկ և միաժամանակ նոր բնութագրական հատկանիշ կարելի է համարել իրավական սկզբունքների տրանսֆորմացվելու հատկությունը: Այս հատկանիշի էությունը կայանում է նրանում, որ ցանկացած իրավական սկզբունք, ունենալով կայուն գաղափարական հենք և ներդրվելով իրավակարգավորումների համակարգում, կրում է որոշակի փոփոխություններ՝ կախված տվյալ պետության քաղաքական ռեժիմից, հասարակական պահանջմունքներից:

Իրավունքի սկզբունքների հատկանիշների շնորհիվ իրավունքի սկզբունքը տարբերվում է իրավական կանոններից և իրավական նորմերից, իրավա-գաղափարական կայուն, սակայն ճկուն հենքով:

4. Իրավունքի սկզբունքներն իրավական աղբյուրների համակարգում զբաղեցնելով առանձնահատուկ տեղ՝ հանդիսանում են յուրաքանչյուր իրավական աղբյուրի գաղափարական և իրավական հիմքը՝ միաժամանակ արտացոլվելով դրանցից յուրաքանչյուրում: Իրավագիտության մեջ խնդրահարույց է իրավական սկզբունքներն որպես իրավունքի աղբյուր ճանաչելու հանգամանքը: Այս առումով, սույն ատենախոսական աշխատանքում, իրավական սկզբունքները որպես իրավական աղբյուր ճանաչելու անհրաժեշտությունը, բխում է նաև իրավակիրառ պրակտիկայի պահանջմունքներից:

5. Իրավունքի սկզբունքների գործառույթները հանդիսանում են հիմնական ողղենիշներ, որոնք ազդելով օբյեկտիվ և սուբյեկտիվ իրականության վրա, կանխորոշում են անհատի կենսագործունեության փոփոխությունները տարբեր ոլորտներում: Ատենախոսությունում բացահայտվում է իրավական սկզբունքների գործառույթների և ենթագործառույթների առանձնահատկությունները:

6. Կախված իրավահարաբերությունների կարգավորման ոլորտից, տեսակից, ձևից, բովանդակային առանձնահատկություններից՝ իրավունքի սկզբունքների դասակարգումը սույն ատենախոսական աշխատանքում իրականացվել է տարբեր եղանակներով: Իրավունքի սկզբունքները, որպես կանոն ամրագրված լինելով նորմատիվ իրավական ակտերում իրականացնում են իրավահարաբերությունների կարգավորում, որն էլ կանխորոշում է իրավական սկզբունքների դասակարգման տեսական և կիրառական չափանիշները:

7. Համընդհանուր իրավական սկզբունքները զբաղեցնելով յուրահատուկ տեղ իրավունքի աղբյուրների համակարգում բնորոշվում են՝ որպես առաջնային, ելակետային, հիմնական նախասկիզբ, որոնց միջոցով և օգնությամբ բացահայտվում են իրավունքի առանձնահատկությունները, իրավունքի բովանդակության յուրահատկությունը և էությունը, որպես հասարակական հարաբերությունների հիմնական նորմատիվ կարգավորիչ: Համընդհանուր իրավական սկզբունքները՝ որպես իմպերատիվ կարգադրագրեր տարածվում են իրավունքի բոլոր ճյուղերի վրա և պարտադիր են իրավունքի ճյուղերի կողմից կարագավորվող իրավահարաբերությունների բոլոր մասնակիցների համար:

8. Առաջարկում ենք իրավունքի համընդհանուր սկզբունքների լիարժեք ամրագրում իրավունքի առանձին ճյուղերում: Մասնավորապես՝ առաջարկում ենք հետևյալ օրենսդրական փոփոխությունները և լրացումները ՀՀ քրեական օրենսգրքի առաջին գլխի 4-րդ հոդվածում հետևյալ խմբագրությամբ. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը և քրեական քաղաքականությունը ղեկավարվում է՝ իրավաօրինականության, օրենքի և դատարանի առաջ իրավահավասարության, պատասխանատվության անխուսափելիության, անձնական պատասխանատվության, ըստ մեղքի պատասխանատվության, սոցիալական արդարության, պատասխանատվության անհատականացման, իրավական

որոշակիության և բանականության, կրկնակի պատասխանատվության անթույլատրելիության և մարդասիրական սկզբունքներով»:

Հետազոտության օբյեկտը: Ատենախոսության հետազոտության օբյեկտն է հանդիսանում իրավունքի սկզբունքների բազմակողմանի, համալիր և համակարգված ուսումնասիրությունը:

Հետազոտության առարկան: Ատենախոսության հետազոտության առարկան է հանդիսանում իրավունքի սկզբունքների հասկացության, բովանդակության, դասակարգման, ամրագրման և կիրառման ընթացքում ի հայտ եկած խնդիրների և թերությունների համակողմանի և հանգամանալից վերլուծությունը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսության մեթոդաբանական հիմքն են կազմում, ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ մասնավոր գիտական մեթոդները: Աշխատանքում առաջ քաշված նպատակը լուծելու համար կիրառվել է համընդհանուր դիալեկտիկայի մեթոդը, իսկ մասնավոր գիտական մեթոդներից՝ ձևական-իրավաբանական վերլուծության, համեմատական-իրավական, համակարգային-կառուցվածքային մեթոդները:

Հետազոտության տեսական հիմքը: Ատենախոսության տեսական հիմքն են կազմում հայրենական, խորհրդային և արտասահմանյան հեղինակների՝ Վ.Ս.Ներսիսյանցի, Գ.Հ. Սաֆարյանի, Գ.Գ. Հարությունյանի, Ա.Գ. Վաղարշյանի, Մ.Ի. Բայտինի, Ս.Ս. Ալեքսեևի, Մ.Ն. Մարչենկոյի, Ա.Վ. Մալկոյի, Օ.Ի. Ցիբուլևսկայայի, Վ.Ն. Կուդրյավցևի, Վ.Ն. Կարտաշովի, Լ.Ս. Յավիչի, Ս.Ե. Ֆրոլովի, Իմրե Սաբոյի, Ժան-Լուի Բերժելի և այլոց աշխատությունները:

Հետզոտության նորմատիվ հիմքը: Ատենախոսության նորմատիվային հիմքն են կազմում՝ ՀՀ փոփոխված Սահմանադրությունը, վավերցված մի շարք միջազգային պայմանագրերը, վճռաբեկ դատարանի, սահմանադրական դատարանի և ՄԻԵԴ որոշումները, ինչպես նաև ներպետական նորմատիվ իրավական ակտերը, որոնք առնչվում են թեմայի շրջանակներում առաջ քաշված նպատակների և հիմնախնդիրների լուծմանը:

Հետազոտության տեսական նշանակությունը: Ատենախոսության շրջանակներում առաջ քաշված հիմնախնդիրների վերլուծության արդյունքները կարող են օգտագործվել պետության և իրավունքի տեսության, այդ թվում նաև իրավունքի

փիլիսոփայության դասընթացներում, ինչպես նաև գիտական հետազոտություններում և աշխատություններում: Հետազոտության արդյունքները իրենց մեջ պարունակելով տեսական նոր մոտեցումներ, կարող են գիտական, ոլորտում իրավունքի սկզբունքների հիմնախնդիրների լուծումներ հանդիսանալ:

Հետազոտության գործնական նշանակությունը: Ատենախոսության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ հետազոտության ընթացքում ուսումնասիրված հիմնահարցերի արդյունքները կարող են նպաստել օրենսդրական բարեփոխումներին՝ ապահովելով օրենսդրական համակարգի հետագա պահանջների որոշակի կատարելագործումը:

Հետազոտությունների արդյունքների փորձաքննությունը: Սույն ատենախոսական աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ էլ կազմակերպվել է աշխատության քննարկումը և գրախոսությունը: Սույն աշխատության մեջ առաջ քաշված հիմնական հարցապնդումները և դրույթները արտացոլվել են հեղինակի երկու մենագրություններում և յոթ գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երեք գլուխներից, ութ ենթագլուխներից, ամփոփումից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության յուրաքանչյուր ենթագլխում մանրամասն քննարկվում է ատենախոսության թեմայի շրջանակներում առաջ քաշված իրավունքի սկզբունքներին վերաբերվող հիմնախնդիրները:

Ներածական մասում հիմնավորվում է թեմայի հետազոտության արդիականությունը, նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլուխը՝ **«Իրավունքի սկզբունքների դերը և նշանակությունը իրավական համակարգում»** վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ **«Իրավունքի սկզբունքների հասկացությունը, էությունը և դերը իրավակարգավորումների համակարգ»** վերնագրով, հեղինակը բացահայտում է իրավունքի սկզբունքների հասկացությունը, էությունը և բովանդակային առանձնահատկությունները:

Միաժամանակ «սկզբունքը» հանդիսանում է մարդու ներքին համոզմունքը, որը ձևավորում է անհատի վերաբերմունքը իրականությանը: Ցանկացած հարաբերություն կառուցվում և կարգավորվում է որոշակի սկզբունքների հիման վրա: Յուրաքանչյուր բնագավառում անհատը, քաղաքացին հիմնվում է գաղափարական սկզբունքների վրա: «Սկզբունք» եզրույթը կարելի է բնորոշել, որպես մարդու ներքին համոզմունքների ամբողջական համակարգ, որից բխում է մարդու վերաբերմունքը իրականությանը, ձևավորվում է իր համար ընդունելի և ընկալելի վարքագծի կանոնները և վերջինիս գործունեության ոլորտում առավել նախընտրելի գործողությունների ամբոջությունը: Այս տեսանկյունից իրավունքի համակարգը նույնպես բացառություն չէ: Իրավունքը կառուցվում և գործում է որոշակի սկզբունքների հիման վրա, որոնցում արտահայտվում է իրավունքի էությունը և սոցիալական նշանակությունը:

Երկրորդ ենթագլխում՝ **«Իրավունքի սկզբունքների կառուցվածքը, գործառույթները և հատկանիշները»** վերնագրով, հանգամանորեն վերլուծության է ենթարկվել իրավունքի սկզբունքների կառուցվածքը, գործառույթները և հատկանիշները:

Իրավունքի սկզբունքների կառուցվածքը, ընդհանուր առմամբ, այնպիսի համակարգ, հիմնական տարրերի բաղադրություն, կապի և միջոցների համադրություն է, որն ապահովում է իրավունքի սկզբունքների ամբողջականությունը, անհրաժեշտ հատկանիշների և գործառույթների պահպանումը սուբյեկտիվ և օբյեկտիվ, անհատական և ոչ անհատական, ներքին և արտաքին, նորմատիվ և այլ օբյեկտիվ իրականության այլ գործոնների ազդեցությունից:

Ցանկացած երևույթ, այդ թվում իրավունքի սկզբունքները կոչված են իրականացնելու, որոշակի գործառույթներ: Իմացաբանական տեսանկյունից իրավունքի սկզբունքները իրենցից ներկայացնում են մտքեր և գաղափարներ, որոնք մի կողմից արտահայտում են իրավունքի գերիշխող գաղափարախոսությունը իրավունքի հարցապնդումների վերաբերյալ տվյալ պատմական ժամանակաշրջանի

համար, մյուս կողմից ձևավորում են պահանջմունքների համակարգ, որոնք ուղղակի կերպով վերաբերվում են դատավորներին և փաստաբաններին, հայցվորներին և պատասխանողներին, մեղադրյալներին և տուժողներին: Այդ իսկ պատճառով, իրավունքի սկզբունքները գոյություն ունեցող իրականության և աբստրակտ ցանկությունների ամբողջություն չէ, այլ իրավահարաբերությունների իրական և գործուն կարգավորիչ է:

«Գործառույթ» եզրույթը մետաֆիզիկայում է բնորոշվում է որպես որևէ երևույթի դերը բանութագրելու և սոցիալական արժեքը բացահայտելու կարևորագույն բաղադրիչ:

Իրավունքի էությունը եւ սոցիալական նպատակը դրսևորվում են նրա գործառույթներում: Դրանք արտացոլում են անհատի և հասարակության վարքագծի վերաբերյալ իրավունքի ազդեցության հիմնական ուղղությունները, ինչպես նաև թույլ են տալիս ձևակերպելու իրավական սկզբունքների գործածության ընդհանուր նկարագիրը:

Եթե փորձենք ամփոփել «իրավունքի սկզբունքի գործառույթ» եզրույթի բնորոշումը, ապա կարող ենք ասել, որ իրավունքի սկզբունքի գործառույթը ունենալով սոցիալական նշանակություն՝ ազդում է հասարակական հարաբերությունների վրա՝ կանխորոշելով դրանց ուղղվածությունը:

Իրավունքի սկզբունքները ազդում են հասարակական կյանքի տարբեր ոլորտների՝ տնտեսության, քաղաքականության, հոգևոր հարաբերությունների վրա, և, հետևաբար, իրականացնում են ընդհանուր սոցիալական գործառույթներ:

Աշխատանքի առաջին գլխի երրորդ ենթագլխում՝ **«Իրավունքի սկզբունքը՝ որպես իրավունքի աղբյուր /ձև/»,** համակողմանի քննարկվում են իրավունքի սկզբունքի տեսանկյունը՝ իրավունքի աղբյուր /ձև/ առումով:

Իրավունքի աղբյուրը բնութագրվում է որպես իրավունքի դրսևորման արտաքին ձև: Այսինքն, իրավունքի հատկանիշներից մեկը, որը հանդես է գալիս որոշակիության ձևում: Առանց իրավունքի աղբյուրների, հասարակական հարաբերությունների կարգավորման հարցում, իրավունքի նորմերը չեն կարող կատարել իրենց առաքելությունը: Հետևաբար, կարելի է ասել, որ իրավունքի ձևը կամ աղբյուրը

բնութագրվում է որպես վարքագծի իրավաբանական կանոնների ամբողջություն, պետական կամքի արտահայտման եղանակ:

Կարևորելով իրավունքի սկզբունքերի դերի և նշանակության հիմնախնդիրը իրավական սկզբունքների համակարգում, միանշանակ պետք է նշել, որ իրավունքի սկզբունքներն իրավական աղբյուրների համակարգում ունեն իրենց ուրույն տեղը և լիարժեք կերպով կարող են համարվել որպես իրավունքի աղբյուր:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ **«Իրավունքի սկզբունքների դասակարգման հիմնախնդիրները»** վերնագրով, բաղկացած է երկու ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ **«Իրավունքի համընդհանուր սկզբունքների բնութագրական առանձնահատկությունները»** վերտառությամբ, հեղինակը բացհայտում է իրավունքի համընդհանուր սկզբունքների բնութագրական առանձնահատկությունների բովանդակությունը:

Համընդհանուր իրավական սկզբունքները, բնորոշվում են որպես առաջնային նախասկիզբ, որոնց միջոցով որոշվում է իրավունքին հատուկ, առավել բնորոշ գծերը ամբողջությամբ վերցրած, իրավունքի բովանդակության յուրահատկությունը և էությունը որպես հասարակական հարաբերությունների կարգավորման հիմնական հենասյուն: Համընդհանուր իրավական սկզբունքները տարածվում են իրավունքի բոլոր ճյուղերի վրա, պարտադիր են իրավունքի ճյուղերի կողմից կարագավորվող իրավահարաբերությունների մասնակիցների համար: Իրավունքի համընդհանուր սկզբունքների շարքում հեղինակը դասում է՝ իրավունքի գերակայությունը, իրավաօրինականությունը, իրավահավասարությունը, սոցիալական արդարությունը, մարդասիրությունը, որոշակիությունը:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Իրավունքի սկզբունքների դասակարգման ավանդական և արդիական մոտեցումների հիմնախնդիրները. համեմատական վերլուծություն»** վերնագրով, հեղինակը համեմատական վերլուծության է ենթարկում իրավունքի սկզբունքների դասակարգման ավանդական և արդիական մոտեցումների հետ կապված հիմնախնդիրները:

Իրավունքի սկզբունքները կազմում են մեկ ամբողջական, բայց միևնույն ժամանակ բարդ համակարգ: Իրավունքի սկզբունքների էությունը առավել համակողմանի և ամբողջական ուսումնասիրելու անհրաժեշտությունը պայմանավորում

է իրավունքի սկզբունքների դասակարգման հիմնախնդրին առավել խորը անդրադարձ կատարելու անհրաժեշտությունը: Իրավունքի ընդհանուր տեսության և ճյուղային իրավական համակարգում առկա են իրավունքի սկզբունքների դասակարգման բազմատեսակ դրսևորումներ:

Սույն աշխատանքում՝ ըստ իրավունքի համակարգի բաղադրատարրերի, իրավունքի սկզբունքները դասակարգվում են հետևյալ կերպ՝ իրավական-ինստիտուցիոնալ սկզբունքներ, միջինստիտուցիոնալ սկզբունքներ, իրավունքի ճյուղային սկզբունքներ, իրավունքի միջճյուղային սկզբունքներ, իրավունքի ենթաճյուղային սկզբունքներ, ազգային-իրավական համակարգի սկզբունքներ, առանձին իրավական սկզբունքներ, միջազգային իրավունքի սկզբունքներ:

Աշխատանքի երրորդ գլուխը՝ **«Իրավունքի սկզբունքների իրացման հիմնախնդիրները իրավաբանական պրակտիկայում»** վերնագրով, բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ **«Իրավունքի սկզբունքների ամրագրման հիմնահարցերը իրավաստեղծ գործունեության ընթացքում»** վերտառությամբ, վերլուծվում են իրավաստեղծ գործունեության պրոցեսում իրավական սկզբունքների ամրագրման հետ կապված հիմնախնդիրները:

Իրավաստեղծումը, լայն իմաստով, բնութագրվում է որպես պետության կողմից ուղղակի ներգործունեություն հասարակական հարաբերությունների կարգավորման նկատմամբ: Նեղ իմաստով՝ իրավաստեղծումը բնութագրվում է որպես իրավասու պետական մարմինների իրավական գործունեություն, որն ողղված է իրավական նորմերի ընդունմանը, փոփոխմանը և վերացմանը:

Սույն աշխատանքում ընդհանրացնելով առկա գիտական մոտեցումները և իրավակիրառ պրակտիկան, տրված է իրավաստեղծ գործունեության վերաբերյալ հետևյալ բնորոշումը. իրավաստեղծ գործունեությունը՝ ստեղծագործական օրենսդրական աշխատանք է, որն իրականացվում է կոլեգիալ եղանակով՝ հաշվի առնելով գիտական մոտեցումները և պրակտիկ հմտությունները, որի արդյունքում մշակվում են նորմատիվ իրավական ակտեր, ինչպես նաև իրավունքի սկզբունքներ:

Աշխատանքի երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Իրավունքի սկզբունքների իրացման հիմնախնդիրները իրավակիրառ գործունեության ոլորտում»** վերնագրով,

համակողմանի քննարկվում են իրավունքի սկզբունքների իրացման հետ կապված հիմնախնդիրները:

Լայն իմաստով, իրավունքի նորմերի կիրառումը պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից իշխանական կազմակերպչական գործառույթ է, որի օգնությամբ համապատասխան մարմինը, իրավաբանական գործերի քննման և լուծման ընթացքում կատարում է որոշակի գործողություններ՝ համապատասխան նորմատիվ իրավական ակտերի: Այս առումով հեղինակը գտնում է, որ իրավասահմանումը /իրավաստեղծումը/ պետական գործունեության ձև և ուղղություն է՝ կապված այն իրավունքի նորմերի պաշտոնական արտահայտման և ամրագրման հետ, որոնք կազմում են պոզիտիվ իրավունքի բոլոր գործող աղբյուրների նորմատիվ-իրավական բովանդակությունը:

Աշխատանքում իրավակիրառ գործունեությունը բնութագրվում է որպես պաշտոնատար անձանց կողմից նորմի կիրառում և կատարում, իսկ նեղ իմաստով, իրավակիրառման գործունեությունը մասնագիտական գրականության մեջ, դիտարկվում է որպես պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից իրավական նորմերի, այդ թվում իրավունքի սկբունքների կենսագործմանն ուղղված իրավական գործուղությունների համակարգի ստեղծում, որն ուղղակի առումով ուղղված է նորմի կեսագործման համար իրավական պայմանների ստեղծմանը:

Այս առումով աշխատանքում հիմնավորվում է հետևյալ մոտեցումը. ըստ որի՝ իրավակիրառումը իրենից ներկայացնում է պետական գործունեության հատուկ տեսակ, որն ուղղակի կերպով կապված է իրավունքի նորմերի պաշտոնական արտահայտման և ամրագրման հետ և միաժամանակ կրում է իրավաապահովող բնույթ, քանի որ իրավակիրառ մարմնի գործունեության արդյունքում ընդունված նորմատիվ ակտը, հետագայում հանդես է գալիս որպես իրավաբանական փաստ:

Աշխատանքի երրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ **«Իրավունքի սկզբունքների իրացման հիմնահարցերը դատական պրակտիկայում»** վերնագրով, խորքային վերլուծության է ենթարկվում դատական պրակտիկան, դրանում արտացոլված իրավունքի սկզբունքների կիրառման առանձնահատկությունները արդարադատության ոլորտում՝ կոնկրետ իրավական հարցեր լուծելիս:

Ատենախոսության ընթացքում կատարված հետազոտական աշխատանքների արդյունքում հեղինակը հանգել է հետևյալ հետևությունների և եզրակացությունների.

1. Իրավունքի սկզբունքներն օբյեկտիվ իրականության և իրավական կյանքի ելակետային հիմնարար դրույթներ են, որոնք կանխորոշում են ազգային իրավական համակարգի էությունը, բովանդակությունը, ինչպես նաև իրավաստեղծ գործունեության և իրավակիրառ պրակտիկայի զարգացման հիմնական ուղենիշները:

2. Իրավունքի սկզբունքների կառուցվածքը բնութագրվում է որպես բազմաբնույթ և բազմաշերտ տարրերի բաղադրություն, կապի և միջոցների համադրություն, որն ապահովում է իրավունքի սկզբունքների միասնական և փոխկապակցված ամբողջականությունը, անհրաժեշտ հատկանիշների և գործառույթների պահպանումը, սուբյեկտիվ և օբյեկտիվ, անհատական և ոչ անհատական, ներքին և արտաքին, նորմատիվ և այլ սոցիալական գործոնների ազդեցությունից:

3. Իրավունքի սկզբունքների արժեբանությունը, սոցիալական նպատակը և հասարակական հարաբերություններում նրանց հիմնական առաքելությունը դրսևորվում են իրավունքի սկզբունքների կոնկրետ գործառույթներում: Իրավունքի սկզբունքների գործառույթները հանդիսանալով որպես իրավունքի սկզբունքների լիարժեք դրսևորման երաշխիքներ՝ ապահովում են իրավահարաբերությունների բնականոն ձևավորումը և զարգացումը:

4. Իրավունքի սկզբունքները՝ որպես սոցիալ-իրավական կուռ արժեհամակարգ, իրավակարգավորումների ոլորտում իրականացնում են քաղաքական, տնտեսական, կրթական գործառույթներ: Սույն ատենախոսական հետազոտական արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ բացի ընդհանուր սոցիալական գործառույթներից իրավունքի սկզբունքներին ներհակ են նաև հետևյալ գործառույթները՝ կայունացման, նորացման, արժեքաբանական-գնահատողական, միավորող (ինտեգրող), կարգավորող, պահպանող: Հետևաբար կարելի է պնդել, որ իրավունքի սկզբունքների գործառույթները կազմելով բարդ և միասնական համակարգ՝ բնորոշվում են որպես հասարակական հարաբերությունների կարգավորման հիմնական և գլխավոր ուղենիշները:

5. Իրավունքի սկզբունքների էությունը դրսևորվում է նրա հատկանիշ-օրինաչափություններում: Հետազոտական աշխատանքի ընթացքում կատարված

վերլուծության ընթացքում կարող ենք եզրակացնել, որ իրավունքի սկզբունքներին հատուկ են հետևյալ հատկանիշները՝

- իրավունքի սկզբունքները համարվում են հասարակական հարաբերությունների օրինաչափություններն արտահայտող իրավական գաղափարներ,
- իրավունքի սկզբունքներն ելակետային, հիմնարար դրույթներ են, որոնք ունեն արտահայտման պետաիշխանական բնույթ,
- իրավունքի սկզբունքներին հատուկ են համապարտադիրության և իմպերատիվ (կարգադրիչ) հատկանիշները,
- իրավունքի սկզբունքներն արտացոլելով իրավունքի էությունը, միաժամանակ հանդիսանում են իրավական նորմերի առարկայական բովանդակության հիմքը,
- իրավունքի սկզբունքներին հատուկ են նաև հարաբերական կայունությունը և դինամիկ զարգացումը,
- իրավունքի սկզբունքները միաժամանակ արտահայտում են սոցիալական իրականության օբյեկտիվ և սուբյեկտիվ օրինաչափությունները:

6. Ամփոփելով ատենախոսական աշխատանքի վերլուծության արդյունքները, պետք է ընդգծել այն հանգամանքը, որ իրավունքի սկզբունքերի կարևորությունը որպես իրավական աղբյուր, հայ իրավագիտության մեջ որքան էլ նվազ է, այնուամենայնիվ միջազգային իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունից պարզ դարձավ, որ իրավունքի սկզբունքները իրավական աղբյուրների համակարգում ունեն իրենց ուրույն տեղը և միաժամանակ կարող են համարվել նաև որպես ինքնուրույն իրավունքի աղբյուր:

7. Համընդհանուր իրավական սկզբունքների համակարգում առանձնակի տեղ ու նշանակություն ունի իրավունքի գերակայության սկզբունքը: Իրավունքի գերակայության սկզբունքը լինելով իրավական պետության գործարկման մեխանիզմներից մեկն ունի մեծ ազդեցության իրավական համակարգի զարգացման վրա: Իրավունքի գերակայության սկզբունքը՝ ապահովելով պետական իշխանության և իրավական համակարգի կայունությունը, բացառում է կամայական, արհեստածին, սուբյեկտիվ գործողությունների իրականացումը, միաժամանակ երաշխավորելով իրավական և հասարակական գործընթացների անարգել և անցնցում իրականացումը:

8. Իրավաստեղծումը՝ բնութագրվելով որպես պետության կողմից ուղղակի ներգործունեություն հասարակական հարաբերությունների կարգավորման նկատմամբ, ապահովում է իրավական սկզբունքների հստակ ամրագրումը, ինչպես նաև իրավաստեղծ գործունեության ընթացքում հնարավորություն է ընձեռում օրենսդրին ստեղծելու մեխանիզմներ իրավական սկզբունքների լիարժեք իրացման և կիրառման համար: Իրավունքի սկզբունքները ձևավորելով օրենսդրական համակարգի յուրատիպ ուղենիշային նախադրյալներ իրավաստեղծ գործունեության համար, միաժամանակ իրավակիրառ մարմիններին հնարավորություն են տալիս իրավակիրառ գործունեության ընթացքում ընդունել իրավաչափ որոշումներ՝ զերծ պահելով իրավական գործընթացները կամայականություններից: Իրավունքի սկզբունքների միջոցով և օգնությամբ վերանում են անհամապատասխանությունները և հակասությունները, որոնք գոյություն ունեն գործող պոզիտիվ իրավունքի համակարգում, քանի որ իրավունքի սկզբունքներն որոշակիորեն ապահովում են ողջ իրավական համակարգի և իրավակարգավորումների արդյունավետությունը:

9. Իրավակիրառ գործունեությունը, որպես պետության գործունեության հատուկ տեսակ, իրավաստեղծագործության հետ միասին, համարվում է պետական կառավարման իրավական ձևերից մեկը: Իրավակիրառ գործունեության ընթացքում իրավունքի սկզբունքների գերակա դիրքը իրավակիրառ մարմնին հայեցողական հնարավորություն է տալիս իրավաստեղծ մարմնի կողմից իրավական կարգավորման ընթացքում ոչ հստակ ձևակերպված այս կամ այն իրավական նորմը շտկել: Բացի այդ իրավունքի սկզբունքների օգտագործումը հնարավորություն է ընձեռում իրավակիրառ մարմիններին առաջնորդվել իրավունքի սկզբունքներով ոչ միայն օրենքի բացի ժամանակ, այլ նաև իրավական կոոլիզիաների դեպքում:

10. Կարևորելով իրավական սկզբունքների դերը իրավական համակարգում, առաջարկում ենք հետևյալ օրենսդրական փոփոխությունները և լրացումները ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ գլխի 6-րդ հոդվածը խմբագրել հետևյալ կերպ. «Վարչական գործերով արդարադատությունն իրականացվում է օրենքի և դատարանի առջև հավասարության սկզբունքների հիման վրա: Դատարանը պարտավոր է ապահովել, որ կողմերն ունենան հավասար հնարավորություններ գործի

քննության ամբողջ ընթացքում, ներառյալ՝ յուրաքանչյուր կողմին ընձեռել քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն»:

11. Առաջարկում ենք հետևյալ օրենսդրական փոփոխությունները և լրացումները ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ գլխում 6.1. հոդվածում. «Վարչական գործերով արդարադատություն իրականացնելիս՝ դատավորներն անկախ են և ենթարկվում են միայն օրենքին: Դատավորների անկախության երաշխիքները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք «Դատական օրենսգրքով» և ճյուղային դատավարական օրենսգրքերով»:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

Մենագրություններ

1. Մալխասյան Լ. Իրավական սկզբունքներիի էությունը և բնութագրական առանձնահատկությունները, Եր., Եվրոպրինտ, 2017, 84 էջ
2. Մալխասյան Լ. Իրավունքի սկզբունքներիի դասակարգման և իրացման հիմնախնդիրները, Եր., Եվրոպրինտ, 2017, 48 էջ

Գիտական հոդվածներ

1. Մալխասյան Լ. Իրավունքի սկզբունքների դասակարգման դասական և արդիական մոտեցումների համեմատական վերլուծություն, Օրինականություն, Եր., 2017, No 99, էջ 66-68
2. Մալխասյան Լ. Իրավունքի սկզբունքների հասկացությունը. Տեսական և գործնական վերլուծություն, Արդարադատություն, Եր., 2017, No 1 (36), էջ 29-33
3. Մալխասյան Լ. Սոցիալական ազատության սկզբունքի հիմնախնդիրները համընդհանուր իրավական սկզբունքների համակարգում, Արդարադատություն, Եր., 2018, No 2(43), էջ 26-29
4. Մալխասյան Լ. Հատուկ իրավական սկզբունքների դերը իրավական համակարգում, Կանթեղ, Եր., 2017, No 2 (71), էջ 204-212
5. Մալխասյան Լ. Իրավունքի սկզբունքների գործառույթների հիմնախնդիրներն իրավական համակարգում, Կանթեղ, Եր., 2018, No 1 (74), էջ 167-172
6. Մալխասյան Լ. Իրավունքի գերակայության սկզբունքի նշանակալից ազդեցությունը արդի իրավական համակարգում, Պատմություն և մշակույթ: Հայագիտական հանդես, Տարեգիրք, Եր., 2017, էջ 498-503

7. Մալխասյան Լ. Իրավունքի սկզբունքների ամրագրման հիմնախնդիրները ՀՀ իրավաստեղծ գործունեության ընթացքում, Պատմություն և հասարակագիտություն, Տարեգիրք, Եր., 2018, No 4, էջ 274-290

Резюме

Роль принципов права в правовой системе РА: практический и теоретический анализ

МАЛХАСЯН ЛИАНА МАЛХАСОВНА

Актуальность исследования данной темы обусловлена коренными изменениями, которые в последнее время произошли в социальной, политической и конституционно-правовой сферах армянской общественной жизни.

Актуальность темы обусловлена также тем, что эта проблема малоисследованная на монографическом и общетеоретическом уровне.

Автор настоящей диссертации попытался на новом теоретическом, нормативном и практическом материале разработать основы современных концепций принципов права. Более того, автор рассматривает принципы права, как обобщения из актов осуществления прав, вытекающих из норм «писанного права», сделанных сугубо практическими целями профессиональными юристами данной правовой системы.

В диссертации принцип права носит обобщающий, абстрактный характер правоположения. Принцип права в представлении автора – это прежде всего норма-идея, профессионального правового сознания, атрибут правового мышления юриста. Кроме того, принципы права позволяют обеспечивать диалектическое единство объективного и субъективного права, т.е. раскрыть и проявить сущность права.

В работе предлагается разработка проблемы оценки принципов права, как фактора эффективности позитивного права в соответствующей правовой системе, а также рассматривается проблематика универсальных принципов права, как явления, служащего «индикатором» универсальности права, как атрибута человеческого общежития. Кроме того, в диссертации значительное внимание уделено специфике развития универсальных принципов права в различных традициях права современности.

Научная новизна данной диссертации выражается в том, что на общетеоретическом уровне анализируются проблемы и основы концептуальных подходов к формулированному понятию и сущности принципов права выявляется,

показывается их роль и значение в правовом регулировании общественных отношений, в национальной правовой системе.

В авторском представлении принципы права возникают и начинают формироваться из правовой потребностей единообразного регулирования сходных фактических ситуации. Принцип не устанавливает право, но формирует право установление, причем в основном уже имеющиеся правоположения, т. е. складывающуюся практику. Ещё одно ключевое свойство принципов права является то, что они в силу своей природы, в том числе структурно, логически, не предусматривают (собственной) санкцией, но определённим образом развивают гипотезу и диспозицию соответствующей нормы, опираются в точности и остаются в рамках её (нормы) санкции.

Кроме того, в данной диссертации подробно рассматриваются основные признаки, характеризующие принципы права.

Теоретическая значимость диссертации заключается в том, что сформулированные в нём теоретические положения и выводы развивают и дополняют наши знания по теории права, правовых принципов, являются методологически исходными положениями юриспруденции.

Материалы диссертации способствуют дальнейшей разработке концептуальных основ теории принципов права, их содержания, функций, места и роли в правовой системе общества.

Практическая значимость работы заключается в том, что содержащиеся в работе рекомендации могут найти практическое применение в правотворческой деятельности и правореализации.

Материалы исследования могут быть использованы сотрудниками правоохранительных и правоприменительных органов, в учебном процессе по общей теории права, конституционному праву и другим отраслевым дисциплинам.

Summary

Liana Makhas Malkhasyan

THE ROLE OF LAW PRINCIPLES IN THE LEGAL SYSTEM OF RA PRACTICAL AND THEORETICAL ANALYSES

The relevance of research of this topic is due to the fundamental changes which have recently happened in social, political and constitutional-legal spheres of Armenian public life.

The relevance of the topic is also due to the fact that this is a problem that has been studied little at the monographic and general theoretical level.

The author of this dissertation has tried on the new theoretical, normative and practical material to elaborate the basics of the contemporary concepts of law principles. Moreover, author considers the law principles as a generalization from the acts of implementation of rights that ensue from norms of "written law" that are mainly made from the practical goals by professional lawyers of this legal system.

In the dissertation the law principle has a generalizing, abstract nature of legal provisions. In the author's conception the law principle is first of all a norm-idea of the professional legal consciousness, an attribute of the lawyer's legal thinking. Besides, the law principles allow to provide the dialectical unity of the objective and subjective law, that is to reveal and demonstrate the essence of law.

In this work the elaboration of the problem of evaluation of law principles is suggested as a factor of the positive law efficiency in the corresponding law system, as well as the problem of universal law principles considered as a phenomenon that serves as an "indicator" of universality of the law, as an attribute of human society. Besides, in the dissertation a considerable attention is paid to the specifics of the development of universal principles of law in various traditions of law of modernity.

The scientific novelty of this dissertation is expressed by the fact that in the general theoretical level the problems and basics of conceptual approaches of the formulated concept and essence of law principles are analyzed, their role and meaning in the legal regulation of public relations in the national legal system is shown.

From the author's idea law principles arise and begin to formulate from legal necessities of equable regulation of similar factual situations. The principle doesn't establish the right but formulates the right of establishment, and basically the already existing legal provisions, i.e the established practice. One more key feature of law principles is that they, due to their nature, also structurally, logically, don't provide for (own) sanctions, but in a certain way develop a hypothesis and disposition of the corresponding norm, they are based exactly and remain within the framework of their (norm) sanctions.

Besides, in this dissertation the main signs, that characterize law principles, are considered.

The theoretical importance of this dissertation is that the theoretical provisions and conclusions that are formulated in it develop and supplement our knowledge of law theory, legal principles, and are the methodologically initial provisions of the jurisprudence.

The material of the dissertation contribute to the further elaboration of the conceptual basics of the theory of law principles, their content, functions, place and role in the legal system of the society.

The practical importance of the work is that the recommendations contained in the work can find a practical application in law-making activity and law-realization. The materials of the research can be used in the educational process of general law theory, constitutional law and other branch disciplines, by the employees of law enforcement agencies.